

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 ֆր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 Տօլար »

ԿԱՆԽԻԿ

Մանուցման սուղը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ԶՈՐԵՔՇԱՔԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

ir vaunk

VARNA (Bulgaria)

Редакция

на вѣстникъ

Израуикъ

ВАРНА

Կրտսերներ եւ չեւ
սրտախ

ԱՂԵՏՔԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Մենք ըմբռնած ըլլալով հանդերձ թէ հայ ազգային յիշատական չարժուժը մայր հայրենիքի մէջ տիրող բռնութեանց և հարստահարութեանց անխուսափելի հետեւանքն է, չենք քաշուած ինչ ինչ առիթներով մատնանշելէ նաեւ թէ յեղափոխութիւն անունին տակ գործուած յախուռն և անհաշիւ գործեր մեր թշնամիին առիթ և պատրուակ ընծայած են հայրենիքին մէջ ապրող մեր եղբայրներու գլխուն նորանոր աղէտներ ստեղծելու: Այո՛, մենք առանց վարանումի ցոյց տուած ենք այդ աղէտներուն պատճառները և պատասխանատուները որոնց մէջ անշուշտ առաջին տեղը կը բռնէ Պալայ Գահուն վրայ բազմող «Մեծ Մարդասպան» ը, զինք չընկալաւ ինչպէս հետմիտին: Իսկ անոր անուղղակի կերպով գործակից եղած են ամէն անոնք որոնք մեր երկրին ու ժողովուրդին իսկական վիճակին գիտակ կ'աճ անգիտակ յանդերձ են հայկական չարժուժին առաջնորդները ըլլալ և ինքզինքնին գործունէութեան մէջ ցոյց տալու յիմար փառասիրութեամբ՝ միամիտ գասակարգ մը մղել յախուռն գործերու և այդ կերպով գիւրացնել Մեծ Մարդասպանին և իր վտանակին սեւ ծրագրին գործակալութիւնը՝ հայ ազգաբնակչութեան բնաջնջումը:

Հայկական աղէտներուն երկրորդական պատասխանատուները և Մեծ Մարդասպանին անուղղակի գործակիցները մատնանշող մեր յօդուածները թերեւս փոքրամասնութեան մը կողմէ կուտակցական նեղ հաշիւներու վերագրուած ըլլան. որպէսզի մեր այն քննադատութեանց անկեղծութեան վրայ դեռ կասկած ունեցող այդ փոքրամասնութիւնը չը յարատեւէ իր վա-

րանումին մէջ, հոս պիտի արտապենք հետեւեալ գրութիւնը որ 25—30 տարիներէ ի վեր վանի և Բաղէշի մէջ ապրող օտար հայասերներու անկողնակալ կարծիքին ամփոփումն է նոր դէպքերու եւ աղէտներու մասին:

Տարի մը առաջ խումբ մը դիւնալ յեղափոխականներ մտան Սասուն եւ հետեւեալը եղաւ կրկնել 1894ի սոսկալի արեւմտեղութիւնները, եւ կործանել այն տուններ որ բարեգործներու առատաձեռնութեամբ կառուցուած էին. սպաննել հազարաւոր անմեղ Հայեր, եւ որբերու եւ այրիներու բազմութիւն մը կրկին Բիւրստանայ ժողովրդեանց օգնութեան կարօտ ընել: Դարձեալ այս ալ բաւական ըլլալու էր մղելու Եւրոպացիները իրենց պարտքը կատարելու: Բայց միջամտութիւնը առաջուան չափ հեռի կերեւել: Հիմայ վանայ մէջ ալ նման ընթացք սը սկսուած է: Զինեալ մարդիկ թէ արտասանմանն եւ թէ ստակալ տեղերէ կ'երեւան, թէ քաղաքին մէջ եւ թէ գիւղերուն մէջ, Հայ ժողովուրդէն իրենց պարէնը կը պահանջեն եւ զրեթէ թուրքին հարստահարութեանց վրայ աւելցուցած են իրենց խտրականաւ ինքնապատշաճութիւնն ալ: Ասկէ զատ կը ստիպեն ժողովուրդը որ զէնք ծախու առնեն՝ իրենց պէտք եղած կենդանիները եւ կուտակած քսերը տալով, եթէ հարկը պահանջէ: Այս վիճակը կառավարութիւնը գիտէ, եւ արդէն Մուշի գաւառին մէջ այդ կերպերով հայթայթուած զէնքերը կառավարութեան կողմէ գրաւուած են, եւ զէնքերուն տէրերը իրեն յանցաբար պատժուած են: Յեղափոխականները վախ կուտան անոնց եւ կը սպաննեն անոնք որ իրենց փափաքներուն չեն համակրել և ծառայել: Այս տեսակ սպանութեանց ամենէն սաշի զարնող զէնքերէն մին է Աթմաթարայ վանքին կաթողիկոսական տեղապահին՝ Արեւն վարդապետին եւ անոր գրագրին սպանութիւնները: Թէ անոնց սպանութիւնները յեղափոխականներու գործերն էին տարակուս չեն վերցներ, եւ ուրացող ալ չկայ: Ուրիշ երեք նշանաւոր Հայեր ալ անեղիւնութեամբ են, եւ կը կարծուի թէ նոյն պատճառներով եւ միջոցներով եւ միջոցներով: Բայց այս յեղափոխականներուն ներկայութեան ամենամեծ չարիքն թուրք պաշտօնականներն եւ ժողովուրդը միշտ զրգռուած վիճակի մէջ պահելն է: Որեւէ կառավարութիւն կ'արգարացուի երկրին մէջ գրգռումներ ձգողները բռնելուն եւ պատժելուն համար, բայց կա-

ռավարութիւնը իրաւունք չունի անմեղէն լուծել յանցաւորին վրէժը: Թող յանցաւորը բռնեն եւ պատժեն: Կառավարութիւնը կրնէ թէ իրենց ալ նպատակն այդ է, բայց երկրին ծանօթ անձի մը կառավարութեան այս յայտարարութիւնը չառ յօտազրիչ եւ գոհացուցիչ չ'երեւիր: Արդէն մէկ քանի իրարանցումներ տեղի ունեցած են: Սեպտեմբերի (1904) սկիզբը վան քաղաքը ահի եւ գողի մատնուած էր, հազարաւորներ հիւպատոսներու եւ օտարազգիներու առնելու մէջ ապաստանեցան պաշտպանութեան համար, եւ մաղ մնաց որ ընդհանուր կոտորած մը սկսէր եթէ հիւպատոսներ եւ օտարազգիներ չը միջամտէին: Երկու տարրեր անդամներ յեղափոխական խումբեր նարեկ գիւղին մէջ չընկալուած են: Վերջին անգամին ոստիկան մը մեղուցին եւ հետեւեալը եղաւ Բուրդերու եւ պաշտօնէից ձեռքով գիւղը կողոպտել, եւ հրոյ ճարակ ընել եւ բնակիչներէն քսան հատը չափ սպաննել: Այս եւ ասոր նման քանի մը դէպքեր պատահած են, ոչ որովհետեւ յեղափոխականները որ եւ է չարիք մը հասցուցած են, այլ որովհետեւ այս տեղերու մէջ յեղափոխականներ երեւցած են: Յեղափոխականներու ծրագրերը մեղ յայտնուած չէ, բայց ընդհանուր տպաւորութիւնը սա է թէ գարունը գալուն պէս այնպիսի զորաւոր ցոյցեր պիտի ըլլան որ գրգռեն Միւսլիմանները ամենավատ խղճութիւններ ընելու: Բան մը որ ամբողջ Հայութիւնը բնաջնջել ընել կրնայ նշանակել:

Արդ, ի սրտէ կը բողբենք այսպիսի ընթացքի մը դէմ, որ ընդհանուր եւ անտեղի ջարդի մը առիթ պիտի տայ: Եթէ եւրոպական կառավարութեան պաշտօնականներէ ոմանք քաջալերած են յեղափոխական օռնորդները որ այսպիսի յնթացքի մը հետեւին, կամ որ եւ է կերպով թելադրած են թէ այս օրինակ շարժումներու պէտք կայ եւրոպական միջամտութեան համար, կը խնդրենք եւ կը թախանձենք որ իրենց այդ յորդորները ետ առնեն: Բայց ընդհակառակն, եթէ, ինչպէս մենք կը հաւատանք, յեղափոխականներու այս ընթացքին արդիւնքն է թէ զրեթեւ եւ թէ իրենց ժողովուրդը զրկել ազգերու համակրութիւնէն եւ անոնց կողմէ գալիք օգնութիւնը արգիւել, թող ամէն միջոց գործածուի յեղափոխականներու առջնորդները համոզել, որ զաղբին այն ընթացքէն որ վանայ Հայ ազգաբնակչութեան այսպիսի մեծ վտանգներ կը սպառնայ:

Կը խնդրենք նաեւ որ ամէն կարելի միջոց գործածուի որ զէնք այնպիսի բարեկարգութիւններ մտցունեն, որով Հա-

յիրու վիճակը տանելի ըլլալով պիտի տայ անոնց պէտք եղած պաշտպանութիւնը եւ պատենութիւնը, որոնցմով կարող պիտի ըլլան իրենց խողաղ գործերուն հետամտիլ և չորհրդով ապրուստ մը ճարել:

(Կոչմակ)

ԿՈՆԴԱԿ

ԵԿԵՆԵՅԱՆ, ԿԱՐԳԱՊԱՆՈՒԹԵԱՆ

Պալայ Պատրիարքը հետեւեալ կանոնակը ուղղած է Պալկարիոյ, Ռումանիոյ և և. պաշտօնական մարմիններուն, քահանաներու տեղափոխութեան մասին:

ՄԱՂԱՔԻԱ ՄԻՌԱՅ ԹԻՍՈՒՍԻ ԿԸՐԻՍՏՈՍԻ ողորմութեամբ Աստուծոյ եւ շնորհիւ Սուրբ Հոգոյն եւ կաթոլիկ Ազգին Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ եւ Պատրիարք Հայոց Թոմարիոյ:

Սիրեցեալ որդւոց մերոց, բարեկրօն քահանայոց, բարեջան անգամոց թաղական խորհրդոց եւ Հոգաբարձութեանց եւ բարեպաշտ ժողովրդեան որ ի. . . քաղաք. . . իոյ ողջոյն եւ օրհնութիւն առատածային:

Ժամանակէ մը ի վեր Պատրիարքարանս տարագէտ զօտարութեանց կը հանդիպի, մեր գաւառներէ դուրս, ուրիշ երկրներու մէջ բնակող, բայց իւր հոգեւոր իշխանութեան ներքեւ գտնուող ազգայնաց եկեղեցական պիտոյից հոգածութեանց մէջ, որովհետեւ այդ տեղերու եւ անոնց եկեղեցաց ծառայող քահանաները խնդիրն եւ առանց օրինաւոր արտօնութեան տեղէ տեղ կը փոխուին, իրենց շահուն կամ իրենց ո՛ր եւ մի կրից տեսակէտէն մղուած: Միւս կողմէ այս տեղերուն թաղ. . . խորհուրդները կամ Հոգաբարձութիւններն ալ ձեռնամուխ կը լինին իրենց գլխուն քահանայ մը հետացնել կամ ուրիշ մը հրաւիրել, եւ այդ կամայական անհաւաստութեանց երեսէն՝ սակայ այս կամ այն ինչ տեղւոյ ազգայնաց առանց քահանայի եւ առանց հոգեւոր հոգածութեան կը մնան, եւ հետեւապէս Պատրիարքարանիս ալ թախանքներ կ'ուղղեն՝ անմիջապէս եւ անհրաժեշտաբար իրենց քահանաներ հասցնելու: Մեր եկեղեցւոյ կանոնաց համեմատ քահանայէ՝ եկեղեցւոյ մը վրայ միայն կը ձեռնադրուին եւ նոյն եկեղեցւոյն հաւատարմաբար կուպուած կը մնան, եւ Պատրիարքարանը չի կրնար իրեն ձեռքին տակ տեղէ

տեղ զրկելու արամայրիքի քանանա-
նեք ունենալ : Ա՛նք որ ո՛ր եւ է
պատճառով իրենց տեղը թողած՝
դուրսի քաղաքները կը գտնուին ,
անոնք ալ ինչ եւ է մէկ պատճա-
ռով այդ վիճակին մէջ ինկած են եւ
միայն հարկը կ'արգարացնէ անոնց
կացութիւնը :

Միւս կողմէ քանանայութիւնը եւ
հոգեւոր հովուութիւնը ներքին կապ
ունին եկեղեցական բարձրագոյն իրա-
ւասութեան հետ, եւ քանանայից
ներեւալ չէ՛ ստանց այդ իրաւասու-
թեան՝ ուզած տեղերնին երթալ
եւ ուզած տեղերնին պաշտօնավա-
րել , եւ եթէ այդպէս քան մը ընեն
անկէտն եւ մեղադրելի վիճակի մէջ
կը գտնուին եւ յանցապարտ կը
մնան : Հետեւաբար Ազգ. Կեդր. Վար-
չութեան Կրօն. Ժողովը հարկ դա-
տեց յատուկ չրջարեական-դրով սզ-
դարարել մեր Եկեղեցւոյ հարադատ
զաւակաց, քանանայից եւ ժողովրդ-
դակնաց , որ կը գտնուին գաւառ-
ներէ դուրս ուրիշ տեղեր եւ Պատ-
րիարքարանիս հոգեւոր իշխանու-
թեան ներքեւ թէ քաղաքականակէս
արգելալ է այս՝ քանանայից ինք-
նին եւ անանց Պատրիարքարանէս
կանխաւ արտօնութիւն ստանալու
թողով՝ որ եւ իցէ պատճառի՝ հա-
մար՝ իւրեց տեղն ու եկեղեցին ,
եւ ուրիշ տեղ ու եկեղեցի փոխա-
դրուի . նոյնպէս ներեւալ չէ թաղ-
կորհրդոց կամ հոգաբարձութեանց
եւ ժողովրդոց իրենց կամքով եւ
որոշումով քանանայ մը մերժել կամ
հեռացնել կամ եկեղեցական պաշտօ-
նավարութենէ խափանել , այլ ամէն-
քն ալ պարտին . երբ պէտքի կամ
պարագայի հանդէպ պտուի՛ն , մա-
րտապէս տեղեկագրով եւ ար-
դարացման փոստերով իրենց խն-
դիրը Պատրիարքարանին ներկայացը-
նել , եւ անոր որոշման համեմատ
գործել :

Քանանայը՝ որ իրենց տեղւոյն չըր-
ջակայից մէջ ցրիւ գտնուող ժո-
ղովրդոց պէտքին կտմ ո՛ր եւ է ու-
րիշ անակնկալ եւ անհրաժեշտ
պահանջի մը առջեւ երթալու եւ
հասնելու հարկը կը զգան , կրնան
զայն ընել , եթէ չորս հինգ օրուան
միջոցին մէջ կրնան երթալ ու գառ-
նալ իրենց տեղը :

Իսկ այդ պարագայէն դուրս իրենց
տեղէն հեռացող քանանայ գիտնան՝
որ իշխանութիւն եւ արտօնութիւն
չունին ուրիշ տեղ եւ եկեղեցի հո-
գեւոր պաշտօն վարել , եկեղեցա-
կան պաշտամունք կատարել , խոր-
հուրդ պաշտել եւ ուրիշ քանա-
նայական պաշտօնավարութիւն ընել,
եւ ինչ որ անհրաժեշտ կընեն ի-
րենց համար յանցանք եւ մեղապար-
տութիւն կը դառնայ , եւ այդ ե-
րեսէն եկեղեցական պատժոց ալ կեն-
թարկուին , եւ եթէ կրկին անգամ
իշխան՝ ծանրագոյն պատիժն ալ վը-
րանին կը հրաւիրեն :

Թաղ. Խորհուրդը եւ հոգաբար-
ձութիւնը եւ առ հասարակ բոլոր
ժողովուրդն ալ պէտք է գիտնան՝ որ
իրենք իշխանութիւն չունին քանա-
նայից ոչ իրաւասութիւն տալ եւ
ոչ իրաւասութենէ զրկել , իրենց գան-
դառները կրնան Պատրիարքարանիս
հասցնել օրինաւոր եւ արդարացեալ
տեղեկագրով , որոնք նկատի կ'առ-
նուին միայն թէ ո՞ւրեք կրից եւ հա-
կառակութեանց եւ տեղական գոտու-
թեանց հետեւանք չլինին : Միւս կող-
մանէ շատ աւելի օգտակար գործ
կատարած կ'ըլլան , եթէ տեղացի
եւ քնիկ քանանայներ ունենալու ջանք

ընեն , եւ պանդուխտներով հոգաց-
ուելու պէտք չունենան :

Այս ազգարարութիւնները կողմնա-
միջակայեցեայ որդեոց , Հայ Ուղղա-
փառ Եկեղեցւոյ հաւատարիմ՝ զաւա-
կաց , քանանայից եւ խորհրդակա-
նաց եւ ժողովրդականաց , եւ ա-
ռանձինն Ձեզ՝ որդեակք իմ , եւ կը
յանձնարարեմք որ մեր այս չըջա-
րեականը քանի մը Կիրակի կարգադ-
րեկեղեցւոյ մէջ ի լուր բարեպաշտ
ժողովրդեան , եւ ջանաք ըստ ա-
մենայնի պատկառ կալ եւ հետեւի
սոյն հրահանգաց , զոր կը կրկնեմք
Ձեզ՝ համաձայն կանոնաց եւ օրի-
նաց մեր սուրբ եւ Ուղղափառ Ե-
կեղեցւոյ , Աստուածային օրհնու-
թիւնն , որ առատարար կը բաշ-
խուի բոլոր աստուածասիրաց , որ ա-
ւետարանական պատուէրները եւ ե-
կեղեցական օրէնքները մտադիւր կը
պահպանեն , Ձեզ ալ զօրացնէ եւ
պահպանէ , ձախորդութիւններէն ազա-
տէ , եւ յաջողութեանց առաջնորդէ
եւ յամենայնի հոգեւոր եւ սուրբ
մարիթարութեամբ սփոփէ :

Ծնորդ Տեառն մերոյ Յիսուսի Քր-
իստոսի ընդ Ձեզ ամենեւին ամէն :

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻԱՍ ԱՐԲԵՊԻՍԻՈՊՈՍ
16 Փետր. 1905

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Շուժայի աղղայնոց կողմէ կաղ-
մուած Յանձնախումբը հայ վար-
ժարաններու յարաւեւութիւնը
ապահովելու նպատակաւ հետեւ-
եալ տեղեկագիրը զրկած է Պատ-
րիարքին .

Պուլկարահայոց զարոցական ծանօթ
հարցի վերաբերմամբ , Ազգ. Պատրիար-
քարանի եւ Պուլկարահայ ուրիշ կեդ-
րոններու հետ հարկ անհրաժեշտ եղած
գործառնութիւններն ի գործ դնելու
համար , 1905 Յունուար 30ին տեղի
ունեցած Ազգ. ընդհանուր ժողովոյ
կողմանէ ընտրուած յանձնախումբն .
Ամեն. Ս. Պատրիարք Հօր 1904 Դեկտ-
10 թուակիր պաշտօնագրոյն եւ ներ-
փակ Կ. Պոլսոյ Պուլկարական գործա-
կատարին զեկեղեցւորոյն նկատմամբ ,
քանիցս Ազգ. խորհրդարանի մէջ ի նիստ
գումարուիլով , հարկ կը համարի իր
կարծիքն ու տեսութիւնները յայտնել
յառաջ , անդրագոյն հայեցողով մը
մատնանել ապա պարագան , որ պուլ-
կար Կրթական Նախարարութեան այս
քայլը առաջինը չէ , եւ թէ 1892 թուին
խմբագրուած զարոցական օրինաց 10րդ
յօդուածի տրամադրութեան համաձայն ,
Պուլկարիոյ Կրթական Նախարարու-
թիւնը նոյն թուին ո՛չ-պուլկար վար-
ժարանաց Հոգաբարձութիւններէն պա-
հանջեց , որ մանուկներու տարրական
ուսումնի ու դաստիարակութիւնը , զըպ-
րոց մտած օրէն իսկ , միմիայն պուլ-
կար լեզուաւ ըլլայ :

Սակայն հայ եւ յոյն պատրիարքա-
րաններու եւ հրեայ ազգապետարանի
հաւաքական եւ ազգայ. դիմումներուն
վրայ , պուլկար կառավարութիւնը
թոյլատրեց եւ գործադրութեան չգրաւ
նոյն օրէնքը : Այսօր սակայն նոյն օ-
րէնքի գործադրութիւնն է որ կը պա-
հանջուի տարբեր ձեւով , այսինքն
փոխանակ պահանջելու , որ մանուկ-
ներու տարրական ուսումնի ու դաս-
տիարակութիւնը առաջին օրէն իսկ

պուլկար լեզուաւ ըլլայ , կը պահան-
ջուի որ հայ վարժարաններու մէջ պաշ-
տօնավարող ուսուցիչներն ու ուսուց-
չուհիները պուլկարական երկրորդա-
կան վարժարան աւարտած եւ ուսուց-
չական իրաւամբ արտօնուած ըլլան :
Անշուշտ , թէ՛ այս եւ թէ՛ նախորդ
պահանջներուն մէջ՝ Կրթական Նախա-
րարութիւնը կէտ նպատակի ունեցած
է եւ ունի պուլկար լեզուին տալ մայ-
րենի լեզուի գերն ու կարեւորու-
թիւնը , առաջ նախընտրութիւն տա-
լով նաեւ պուլկար դաստիարակու-
թեան : Մանրամասնելու հարկ չկայ ,
որ պուլկար կառավարութեան այս
պահանջը բոլորովին տարբեր գիրքի
մէջ պիտի գնէ մեր կրթական հաստա-
տութիւնները , եւ տոհմային դաստիա-
րակութիւնը պիտի փոխանակուի պուլ-
կար դաստիարակութեամբ , կրթա-
ւելցնէք նաեւ սա պարագան , որ
գործադրարար պուլկարահայեր , նիւ-
թական անձուկ պարագայից բերմամբ ,
ցարդ ի վիճակի չեն եղած հարկ եղածը
ի գործ դնելու , պահանջուած օրէնքի
համապատասխանող հայ ուսուցիչներ
ունենալու մասին :

Այս միջանկեալ կէտը , որուն կրկ-
նուած ըլլալը զուրկ չէ շահեկանու-
թենէ , մեր ներկայ տեղեկագիրն մէջ
յիշելով , յանձնախումբս ներկայիս կը
փախչայ պարզել իր կարծիքն ու տե-
սութիւնները հետեւեալ ամփոփումնե-
րով :

Պուլկարահայեր , մեր տոհմային
պահպանումն զատ , մեր կրօնի ու ե-
կեղեցւոյն անվիանդ յարասեւութեան
համար , մեր մայրենի լեզուի ու ազ-
գային դաստիարակութեան անմիջական
հարկն անհրաժեշտ ու էական համա-
րելով , կրօնի ու ազգային լեզուի այս
փոխադարձ առնչութեան վրայ յիշեմք՝
յանձնախումբս պատշաճ կը դատէ .

Ա. Մեր Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիար-
քարանէ վկայեալ ուսուցիչներու եւ
ուսուցչուհիներու պուլկարահայ վար-
ժարանաց մէջ պաշտօնավարելու ար-
տօնութեան համար , կրկնակի եւ հա-
ւաքական դիմումներ ընել պուլկար
կրթական Նախարարութեան եւ մաս-
նաւորաբար Նորին Արքայական Բարձ-
րութեան Պուլկարիոյ իշխանին մօտ :
Բ. Խնդրել Պուլկարիոյ Կրթական
Նախարարութիւնէն որպէս զի մեր
թուրքերն մէջ գտնուած եւ եւրոպա-
կան կառավարական վարժարաններու
յար եւ նման ուղղութիւն ունեցող ծա-
նօթ համալսաւոր կրթական հաստա-
տութիւններէ , ինչպէս Ազգ. Կիրոնա-
կան , Պէրպէրեան եւ Սանասարեան
վարժարաններէ , եւ Ռուսական կառա-
վարութեան օրինաւորապէս ճանչցուած
Ռուսահայ երկրորդական վարժարան-
ներէ վկայեալ չըջանաւարտներու մաս-
նաւոր արտօնութիւն արուել , որ կա-
րողանան պաշտօնավարել պուլկարա-
հայ վարժարաններու մէջ ,

Գ. Եթէ պուլկար Կրթական Նախա-
րարութիւնը , իր նոր օրէնքովը , հայ
վարժարաններուն պուլկարական վար-
ժարանաց համապատասխանող ուղղու-
թիւն տալ կուզէ , յանձնախումբս ա-
ւելորդ չը համարի բացառել թէ ար-
դէն պուլկարահայ վարժարաններու
ծրարներն ու ուսումնական վիճակը ,
չատ անշնան բացառութեամբ , պուլ-
կար վարժարանաց յար եւ նման է :
Իսկ եթէ պուլկար կառավարութիւնը
հայ վարժարաններու մէջ պուլկարե-
րէնի կարեւորութիւնը զգալի ընել
կուզէ , տեղէն ընելու , որ պուլկա-
րահայերս , պուլկարերէնի համար ա-
մէն ջանք ու կը դնեմք , պուլկար
լեզուէն զատ գիտական դասերն ալ
պուլկարերէն լեզուաւ ուսուցանելով

հայ վարժարաններու մէջ : Այսու-
հանձնախումբս պատշաճ կը դատէ
խնդրել պուլկար կառավարութիւնէն ,
որպէս զի մեր վարժարաններու ներկայ
ուղղութեան շարունակութիւնը բա-
րենաճի արտօնել մեզ պուլկարահայե-
րուս :

Դ. Նկատի ունենալով սա՝ շահեկան
պարագան , որ Պուլկարիոյ մէջ ոչ-
պուլկար հասարակութիւններու հոգե-
ւոր ներկայացուցիչներ , կառավարա-
կան չըջանալիներու հետ մօտիկ ա-
մէն դիւրութիւն ու տեղական առա-
ւելակշիռ միջոցներ ունենալով , իրենց
պաշտօնական դիմումներն աւելի յա-
ջող ելքի եւ նպաստաւոր արդիւնքի
կրնան յա՛գիլ , Յանձնախումբս էական
ու ստիպողական կը համարի պատ-
րիարքական վարչազէտ ու փորձ փո-
խադրել մը անմիջական ներկայու-
թիւնը , Յանձնախումբս կը ծանրանայ
պահանջուած հոգեւորականին ներ-
կայութեան վրայ , աչքի առջեւ ու-
նենալով պատմական այնպիսի դաժնա-
ղէտ իրողութիւններ , որոց վերջիչու-
մը սարսուռ կազդէ մեզ , Այժմ պուլկա-
րահայոցս առաջարկուած համանման
եւ այլ անըմբի պայմաններու եւ ծա-
խորդածներու հետեւանքով էր , որ
փճացան եւ օտարացան իսպառ բազ-
մաչէն լիանայերն ու Թրանսիլվանիոյ
գոյաւոր գաղութները , եւ նոյնօր ինակ
երեւոյթներու քիմամբ որ կորստեան
անդունդին մօտեցած է գծադրարար
Ռուսահայութիւնը , Յանձնախումբս
էական ու անհրաժեշտ կը համարի պա-
հանջուած եկեղեցականին ներկայու-
թիւնը նաեւ երկու տեսակէտներով .
առաջին՝ որովհետեւ պուլկարահայերը
զեռ իրենց քաղաքական եւ առեւտրա-
կան կեանքի եւ ինչ ինչ պայմաննե-
րու բերումով , տաճկահայերէ գտնա-
գանուելիք աչքառու խրամատ չեն
կաղմեր ուրիշ արտասահմանեան մի
քանի գաղութներու պէս , եւ իրենց
ազգային հաստատութիւններու հան-
դէպ տածած զգացումները գնահատելի
են եւ ազգայնական տրամադրութեան
ներքէ յուսաւէտ : Երկրորդ՝ որովհետեւ
պուլկար կառավարութեան մասնաւո-
րապէս Հայերուս , հայ հոգեւորական-
ներու եւ պատրիարքական ներկայա-
ցուցիչներու նկատմամբ ցարդ ունեցած
համակրական վերաբերմամբ կոռւած ու
յենակէտ մըն է ենթադրելու , որ պատ-
րիարքական փոխանորդի մը ներկա-
յութիւնն ու անձամբ անձին միջնոր-
դութիւնը պիտի ունենայ իր օգուտ-
ները , Այս այս կրկին տեսակէտնե-
րով , Յանձնախումբս շեշտելով կը
կրկնէ պատրիարքական փոխանորդի մը
անմիջական ներկայութիւնը :

Անգամը Յանձնախումբի
Սողոմոն Պոյաճեան , Տ. Պէրքեան
Գ. Թահրախանեան , Մ. Մեթրեքեան
Պատրիարքարանի
Շուժայ , 9 Փետր. 1905

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԷՏԷ

Մեր ընթերցողներուն յայտնի է թէ
Կրէտէի Յոյն արքայազուն իշխան
Եօրկին Եւրոպա ըրած իր վերջին ճա-
նապարհորդութեամբը ջանացած էր
Կրէտէն Յունաստանի հետ միացնե-
լու համար պետութեանց հաւանու-
թիւնը ստանալ : Իշխանին դիմում-
ները ապագրիւն մնացին , եւրոպա-
կան դահլիճները յամառեցան Կրէտէն
Սուլթանին անուանական դերիշխաւ

նույն ժամանակ արդեն իսկ Բայք կը
բնակարարուի մայր երկրին հետ միա-
նալու իրենց բաղձանքէն մղեալ ,
այս անգամ կրկին ապստամբական
զորք պարզեցին : Այս նոր շարժման
գլխիւ կը գտնուէին նախկին ապս-
տամբապետներէն թումիս եւ վինէ-
չէն : Ասոնք իրենց կուսակիցներ-
ընդ հետ զենք առած լեռները
քաշուեցան (շուրջ 3,000 հոգի եւ օր
ըստ օրէ կը բազմանան Յունաստանէ
ն) Մակեդոնիայէ գացող կամուրջնե-
րով , որոնց ամբողջին թիւը 25,000ի
պիտի հասնի կըսեն Աթէնքի թեր-
թերը եւ առժամանակեայ ազ-
գային ժողով մը գումարեցին Հիւ-
նասթի մէջ . ժողովին նախագահ ընտ-
րուեցաւ Տ. Բաբանանքիս : Այդ
ժողովը պետութեանց ծանուցակիր
մը զրկեց , որով ըսաւ թէ ճնշակա-
կառավարութիւնը գրեթէ անկախ կա-
ռավարութիւն մը ըլլալով , կրէ տա-
ցի ժողովուրդին ներկայացուցիչնե-
րը ազգային ժողով գումարած եւ
որոշած են կրէ տէր միացումը Յու-
նաստանի հետ :

Այս ապստամբական շարժումը որ-
չափ Սուլթանի անուանական դե-
րիշխանութեան զէմ նոյնչափ ալ
իշխան Եփեսոսի այսօրուան իշխա-
նութեան զէմ ըլլալով , իշխանը շատ
փափուկ դիրքի մը մէջ կը գտնուի
այսօր : Թէեւ իր փափաքն ալ էր ,
զէթ արտաքուստ , Յունաստանի
հետ միացումը , բայց իր ստանձնած
պաշտօնին ու իր իշխանութեան զէմ
ապստամբ կը գտնէ այսօր իր ժո-
ղովուրդը , որուն զէմ հարկադրուած
է իրեն տրամադրելի օտար ուժերով
իր դիրքը պաշտպանել եւ սպառնալ
այն ժողովուրդին որուն իշխանը
ու գաղափարակիցն է ինքն ալ :
Պետութեանը կը ստիպեն իշխան
Եփեսոսի իր պաշտօնը շարունակելու .
իսկ ապստամբներու կազմած ազգա-
յին ժողովը Յունաստանի հետ միա-
ցումը յայտարարելով , իշխանին կա-
ռավարութիւնը դադարեալ կը նկա-
տէ եւ առժամայէս կառավարու-
թեան զէմը իր ձեռքը առնել կը նկատուի
Իրաց այս վիճակին մէջ , ինչպէս
կերեւայ , իշխան Եփեսոսի պիտի պար-

տաւորուի հրաժարելով քաշուիլ կը-
զիէն , եթէ չուզեր իր սիրելի ժո-
ղովուրդէն վանուիլ եւ կամ ապս-
տամբներ զսպելու . անուշով չորս
խնամակալ պետութեանց գիտնորնե-
րուն կատարելէ ու մարտնչութեանց
կրտսերապէս գործակից ըլլալ , փա-
փուկ դրոյթին : Պետութեանք արդ-
եօք պիտի համարձակին այս անգամ
ալ 1897 ին ըրածնուն նման թնդա-
նօթի բռնել կրէ տացնելը :

ԱԶԳԱՅԻՆ

Պարսկահայոց Դաւրէժ գումա-
րուող պատգամաւորաց ժողով ի
նորոյ քուէարկութիւն կատարե-
լով , Առաջնորդ ընտրած է Տ.
Բարթուղիմէոս եպիսկ. Գէորգեան
որ Էլմիսճնայ միաբաններէն է :

Այժմ տեղն է ըսել թէ վերջա-
պէս Մաշտոց վարդապետի էն-
թերքները , — ի հաշիւ կուսակ-
ցութեան մը — անգոր գտնուեցան
Մարաճեան արքեպիսկոպոսը Ա-
մերիկայէ հեռացնելու զինք
Պարսկաստանի Առաջնորդ ընտ-
րել տալով :

Գահիրէէ կը տեղեկացնեն
թէ հանդուցեալ թագուր փաշա-
յի կինը խոստոցած է հիւանդա-
նոց մը կառուցանել :

Տեղւոյս ազգային վարժա-
րանի աշակերտները նախորդ
տարեշրջանի մէջ սանձարձակ եւ
անկարգապահ վարժուած ըլլա-
լով , դժբաղդապէս մինչեւ այ-
սօր կարելի չէ եղած զերենք
զգաստութեան վարժեցնել հա-
կառակ հոգաբարձութեան խնա-
մոտ ջանքերուն : Այս մասին
ընդհանրացած դժգոհութեան
վերջ մը տալու համար , Հոգա-
բարձութիւնը այս անգամ ստի-
պուեցաւ վճռական միջոցներու

գործելու եւ խել մը բարեկարգու-
թիւններ ընել վարժարանի պաշ-
տօնէութեան համար : Իր հրա-
հանգներուն անսալ չուզող ու-
սուցիչներէ մին հրաժարեցաւ ,
իսկ ուրիշ մը պաշտօնադուրկ ե-
ղաւ : Կը սպասուի որ Հոգաբար-
ձութիւնը ըմբոստ աշակերտնե-
րու համար ալ վճռական ընթացք
մը բռնէ , որպէսզի կարելի ըլլայ
վարժարանին կարգապահութիւնը
նախանձելի վիճակի մը մէջ դը-
նել :

Ակնայ առաջնորդարանէ
հասնող թախանձանդէ մը մը-
եալ տեղւոյն աղքատ աղայնոց
նպաստելու նպատակաւ քանի մը
ամիս առաջ քաղաքիս մէջ կա-
տարուած հանգանակութեան ար-
դիւնքը 270 ֆր. զրկուած էր նը-
պատակին Տիար Նիկողոս Բէստան-
եանի միջոցաւ : Այսօր Տ. Գէ-
տանեան խմբագրութեանս ներ-
կայացուց Ակնայ առաջնորդա-
րանին մէկ նոր ամակը ու-
րով շնորհակալութիւն կը յայտ-
նուի զրկուած գումարին համար
եւ արժեքներ ու բարեմաղթու-
թիւններ կը կարգացունէր իր
նուիրատուներուն : Նոյն նամակը
կը յիշէ նաեւ թէ 300 է աւելի
հացակարօտ աղքատներ այսօր
զուրկէն հասնող նպաստներով
կը կերակրուին :

«ԳՈՂԺԱՆ» ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԱՐ

Այս խումբը խմբագրութեանս
յայտարարութիւն մը զրկելով ,
խնդրած է ծանուցանել թէ՛ ինք
որոշած է Զատիկական տօնին առ-
թիւ տեղւոյս ազգային վարժա-
րանի աղքատ սանուց զգեստ եւ

կօշիկ հայթայթելու նպատակաւ
ներկայացում մը տալ :

Յաջողութիւն կը մաղթենք :
Այս առթիւ խումբը կը յայ-
տարարէ նաեւ թէ յառաջիկային
ուրիշ հանգէսներ ալ պիտի տայ
բարեկարգ նպատակ հաստատութեանց
ինչպստ եւ զոյանալիք հասոյթ-
ներուն 20 առ 100ր առժամակալ
իր պէտքերուն պիտի յատկացը
ցնէ :

Հետաքրքիր ենք իմանալ թէ
խումբին կողմէ Սասնոյ արկածե-
լոց ի նպաստ տրուած երեկոյ-
թիւն հասոյթը իր նպատակին
հասա՞ւ եւ ի՞նչ միջոցաւ : Կր սի-
րենք յուսալ թէ նաեւ 20 առ 100
վար դնելու նոր որոշումէն ա-
զատ մնացած է այդ գումարը :

ԾԱԽ. Ի ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ե. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐԻՍԻՆՆ
ՀԱՅԿԱԿՆԵ ԵՐԿՐՈՐԳ անգամ ապագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պոլսի
ներու նիստ ու կացը ու թուրքե-
կրած տառապանքը անոնց աղատու-
թենէն առաջ. Գին 50 ամսիկ

ՀԱՅԴԵՆԻՔԻ ՉԱՅԻՐ Պատկեր
մը ճաճահայաստանի լեռնային կեան-
քէն : Զեղչեալ պին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիմել
վանդակ « Ի Ր ա լ լ յ » ի խմբագ-
րութեան

ՍՕՅԻԱ Տ. Օննիկ Գարսեանի
ՊՈՒԿՐԵՇ Տ. Օննիկ Փափազեանի
եւ Տ. Յ. Պիպէոնեանի
ԳՕՆՍԻՆՆՈՒ Տ. Սիսակ Մէլքեանի
ԳԱՀԻՐԵ Տ. Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԷԲՍԱՆԴՐՈՒ Տ. Ստեփան Մազ-
մանեանի
ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Յարմա-
նեանի
ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
ՓՐՕՎԻՏԵՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեանի

ԱՐՓԻՍԱՐ ԱՐՓԻՍԱՐԵԱՆ

18

ԿԱՐՍԻՐ ԺԱՍՈՒՏ

(Շար. նախորդ թիւէն)

Եպիսկոպոսը լուռ կը մնար : Էֆէնտին քաջա-
ւերուած շարունակեց .

— « Զինուորեալ մանկանց » ին հասա՞ր մի . . .

— Է, հասայ , ըսաւ տէրտէրը հեզօրէն :

— Հոն , հոռմըներուն խաչ հանիլը կը դարձնես :

— Ես հոռմ տեսած չունիմ , եւ ոչ ալ անոնց խաչ
հաննին զիսմ , պատասխանեց տէրտէրը , ուսե-
րը վեր թռնուելով :

Պզտիկ ագնուաշուք մը աթոռէն ելաւ , ու սկը-
սաւ աջէն ձախ երեսն հետեւէ հետեւ խաչակնքի
չընդնարուելու չափ արագօրէն : Ժողովը կը
խնդար :

— Իշտէ , հոռմըները ասանկ խաչ կը հանեն կը-
սէր :

— « Լիտա՛ն , տէրտէ՛ր , լիտա՛ն , շարունակեց Էֆէն-
տին : « Զինուորեալ մանկանց » լուռելու չէ : Հա-
յոց մէջ « զինուորեալ մանկանց » չըկա՛յ , չըլ-
լա՛ր : « Ասոնց մանուկը որ զինուորեալ ըլլայ
հապա մեծը ինչ պիտի ըլլայ » կըսեն հոռմն :
« Որ սուր առցէ սրով անկցի » . բերանիս ամուր
ամուր ձայնով « զինուորեալ » սոսնաք նէ , հաքէն
բերանիս ալ « զինուորեալ » կը գոցեն , հա՛ , Զը
լուռի , չը լուռի :

— Անանկ է ես՝ , անանկ է ես՝ , կրկնեց խմ-
բերը :

Հայաստանցին ա՛լ չգիմացաւ . ոտքի ելաւ ու
էֆէնտին երեսն ի վեր պրտաց .

— Էֆէնտի , էֆէնտի , ա՛լ չափը անցուցիր : Կր-
նականին մէջ եթէ փոխելիք բան մը կայ , հրա-
հանգը սրբազանէն գալու է եւ ոչ թէ քենէ հաս-
կեցա՞ր :

Դիմադարձական այսպիսի դիտողութիւն մը՝ եր-
սուն տարիէ ի վեր բնաւ չլսուած՝ եւ որ բանը
հարուած կուտար էֆէնտին գերիշխանութեանը ,
չուարեցուց ամէնքը , նոյն իսկ եպիսկոպոսը : Ա-
մէն աչք սրբազանին դարձան ըրպէսբար : Անիկայ
պատահանէն դուրս կը նայէր , չլսելու զարնե-
լով . բայց սրտէն զգացած գոհունակութիւնը զէմ-
քին վրայ կը ցոլար :

— Սրբազանը ես եմ , ես գոռաց էֆէնտին : Նո-
րին վերափառութիւնը նուազաւոր կը ճանչնայ այս
գեղին պատասխանատուն :

— Հրամանքդ , ըսաւ տէրտէրը ձեռքը պնակներուն
երկնցնելով մինակ ասոնց կը խառնուի . տա-
ճարին մէջն ալ , շա՛տ շա՛տ խախտն ու վրեժեղի-
րուն : Լուսարարը քնիէ վեր է : Անիկայ աստի-
ճան ունի : Քահանաներուն հրահանգ տալը քու կա-
րողութենէդ դուրս է . . .

Դեռ պիտի շարունակէր , բայց էֆէնտին , բը-
ռուեցըք սղծած , վրան վազից , մոլեղին պոռալով .
— « Ծո՛ , տէրտէր , ես քու մօրուքդ քրա՛շ ընել
կուտամ :

— « Ծո՛ , Հայրապետ , ես ալ քու պիտեղ կը . . .
էֆինտին պարզապէս խնդացած էր : Ագնուա-
շուքները հազիւ թէ կրնային զինքը զսպել , թե-
ւեղէն մտած :

Վա՛յ , զուէն ինծի « Ծո՛ » մի՛ ըսես : Ե՛ս , նո-
րին վերափառութեան պաշտօնեան . ե՛ս պաշտօնով
պատուուած , զուէն ինծի « Ծո՛ » մի՛ : Բերանդ պիտի
չորցնեմ , լեզուդ կտրել տամ պիտի :

— Ու ե՛ս , պաշտօնեայ բարձրելոյն ճակատս
սուրբ միւստիմով օրուած , զուէն ինծի « Ծո՛ » ըսես
պատասխանեց Հայաստանցի տէրտէրը ծանր ծանր ,
ալ բազուկը երկինք բարձրացնելով :

Ո՞ր լուռութիւն :
Ղարկել , սրբազանին առջեւ խոնարհութիւն ընե-
լով խրոխտաքայլ դուրս ելաւ :

— Ժամկոչ , կանչեց էֆէնտին :

Ժամկոչը եկաւ բարեւ բռնած կայնեցաւ :

— Հիմակ հիմակ հրամայեց էֆէնտին , աւապա
մը պիտի բռնես , ասոր ետքաղը մէջը կը դնես ,
ինքն ալ մէկտեղ , չիտակ Պատրիարքարան կը
տանիս : Ես վաղը կերթամ կը խօսիմ :

Ու ժամկոչին երկու մէծիտիէ տուաւ :

Հինգշաբթի օրուան Պոլսոյ թերթերը « Ազգային
լուրեր » ու մէջ հետեւեալ տեղեկութիւնը կը հա-
ղորդէին .

« Յուսիկ անուն քահանայ մը , Տոմազ գեղէն , որ
առժամաբար Օրթագեղի եկեղեցին խրկուած էր , հոն՝
իր գեղին անունը արդարացնող բնաւորութեամբ՝
թաղը տակնուվրայ կ'ընէր : Վսեմ . Հայրապետ է-
ֆէնտին պէտք եղած դիտողութիւնները Պատրիարքա-
րանին հաղորդած ըլլալով , այդ խառնակիւր , բռնք
չքահանան , երէկ բարապաններուն հսկողութեամբ
Մախսուէի շոգենաւը դրուելով , իր երկիրը խր-
կուեցաւ Սամսոնի ճամբով » :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Լեզվագիտութեան հարստութեան թէման քննարկելու նպատակով 60 միլիոն ֆրանկ իսթիգրազ իսթիմէսինէ տալիս իրատէ սուտուր իթմիշ վէ մուգավէլէ իմզալանմը տըր :

Ֆրանսատան տախի 60 միլիոն ֆրանկ իսթիգրազ իսթիմէսինէ տալիս պիտի իրատէ պէքլէնիլիյոր :

— Սթանպուլ ճէրիտէլէրինտէ եաղըտըղը իւզրէ, եղնիկ եպիսկոպոսըն նակէհան զայպ օլմասընտան նաշի թիւրք զապթիէսի հէյէհանա կէլուպ սըգը սուրէթտէ թահգիգաթա պաշլամը տըր : Եպիսկոպոսըն նէ թարիգլէ վէ նէ վասիթալարլէ գաշմը օլտըղը անաշըլմամը տըր : Պաղըլարը մուսալէյին պէլքի թէլէֆի նէֆս իթմիշ, պէլքի սագլանմը օլմասընտա տալիս էնպիսի շիւքհէլէրէ զահիպ օլըյորլար : Հէր հալտէ շու կիւնլէրտէ եղնիկ սըբազանըն սէլամէթէ չըգմը օլտուղըն մէսէրէթլէ տույաճալը :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Ֆիլիպպէնէն օլընտան թիւրք ճէ Մուսապէնէ նամ հաթթալըգ կազէթանըն միւտիլի-մէսուլը Պուլկարիատա պուլընմատըղը սէպէպլէ, միւտաի ումուսիլիք թարաֆընտան գանուըն ահաքեմալ մէզքիւր կազէթա իտաքէլանէսինէ իսթար օլընմը, վէ Պուլկարիատա մէզքուտ օլան պիտի զաթ կազէթանըն մէսուլիլէթին տէրէստէ իթմէսի էլզէմ օլտըղը վէ աքսի հալտէ գաբանըլմասըն իգթիզասը պիտի իթմիշ :

Նակէհան միւտիլի-մէսուլըն տէկիլիլէսի իլէ կազէթանըն իսթի տախի թէպուլի իթմէք իգթիզա իթաիլիտէն, պու տէֆա «Մուվազէնէ» եէրինէ «Էհալի» իսթի իլէ պիտի կազէթա գապուլ իթմիք :

Մուսապէնէն սօն նոմէրօլարընտա իսթիմալ իսթիլիլի լիսան պէ հազգին պուլկար հիւքիւմէթինին տըգգաթընը ճէլպ իտէճէք իտի, զիտա Պուլկարիատա իսլամ էհալիին ըրգ, ճան ու մալինի մուպալաղալը սուրէթտէ թէհիլքէտէ կէսթէրմէքտէ օլտըղընտան մաստա, էլըրօբայա իշթիլքեա իթմէք իշիւն իսլամ էհալիտէն պիտի հէյէթի մէպուսէ ինթիլապը իլէ էլըրօբա բաիթաթարընա կէստէրիլմէսինի թէչլիգ իտէր իտի :

Պու եօլտա թէչլիգաթլէ իսլամ էհալիի ալթիւթ իթմէկէ իգթիլիզա գալմամը տըր զիտա, Սթան-

պուտաքի Պուլկարիա վէքիլի Մ. Նաշէլիշ Պապը Ալինին իշթիլքեա իւզէրինէ քէնտիսի թէքլիֆ իթմիքի մուաղղամ տէլէթլէրտէն մէսուպ պիտի գոմիսիօն Պուլկարիատաքի իսլամարըն աշվալինի թահգիգ իթմին, վէ սօնրա մէզքիւր գոմիսիօն Մաքէթոնեատաքի Պուլկարիալըն հալինի տէ թահգիգ մէմուր գըլընտըն :

Բէսմէն պու եօլտա պիտի թէքլիֆ վար իքէն, օնտան սարֆը նաղար իտուպտէ ալը պիտի հէյէթ էլըրօբայա եօլմադ թէչվիգի Մուսապէնէն էհալիին ֆաիտէսինտէն զիյալտէ պաշգա մագսէտլէրէ իսթմէթ իթմիլիլին կէսթէրիյոր :

Կ Ի Վ Կ Ի Ի Ի Ի

Եէնի թալիս օլընտան գրալ վէքիլի բրէնս վօրօնյուլ-թաշըմ պիլիթին կալկասիա էհալիլինէ իսթապ պիտի պէյաննամէ նէչր իտէրէք, էհալիին հուղուղընը վէ մէզհէպ ու միլլիլէթէ սէրպէսիլէթին թէէմին իտէճէկինի վէ պա խուսուս էրմէնիլէրին քիլիլէ վէ սալի մէսէլէլէրի քէնտի արղուլարընա թաթպիգէն հալլ իթմէկէ մէզուսիլէթի թամմէյէ հալիլ պուլընտըղըն պէյան ու իլան իթմիշ տիլ : Շու հալտէ Չարըն մահուտ էմրի թէպուլ օլընմադ տէյիւ սապըգ տախիլիլէ նաղըրը մագթուլ Բրէլէնին վէհ. կաթպիլիսա վէյիլ օլտըղը ճէվապը բէտտ Բլէլէնին քէնտի ույտուրմասը օլտըղը թէպէյիլ իտէյոր :

— Վէհ. կաթպիլիսա բուս խաքիճիլէ նաղըրընա պիտի թէլէկրաֆ քէչիտէսի իլէ, եպիսկոպոս թագտիս օլմագ իշիւն էլմիսթինէ կիթմէք իսթէյէն թահիպլէրէ սուհուլէթ վէրիլմէսինի թէքիլիֆ իթմիշ տիլ :

— Չապիթ էլպիսէսի իլէ մէհուլ պիտի շալա Յարոքէ Սէլտա տէրտէս օլընտալ իւզէրինտէ 2 պոմպա պուլընտը. ֆագաթ էլըրագա տալիս պաշգա տէլիլէր պուլընմամը տըր :

Կ Ի Բ Ի Տ

Պրոմէթէլ, 24 մարտ
Բրէնս Եօրիլի առանըն աքըլարընա պիտի էմիրնամէ եօլլալուպ, 12 սաաթ զարֆընտա սիւհալարընը թէրբլէ հիւքիւմէթէ արղը իթաաթ իթմէլէրին էմր իթմիշ. ֆագաթ ըստան բէյիլէրի մուղալիլի օլարագ, պիտի իսթարնամէ իլէ 36 սաաթ զարֆընտա Բրէնսին մէմուրիլէթտէն չէքիլմէսինի վէ աքսի թագտիլտէ թարտ օլընմաղընը իսթար իթմիլէր :

Կիլիստէ Սուլթանըն հուգուգը հիւքիւմէթինին մուհաֆազա իթմէք մագսէտի իլէ, թիւրք

հիւքիւմէթինին հարպ սէֆինէլէրի եօլլալաճաղը մէմուլ օլընրյոր : Պու շիւքէտէն նաշի Եուհան հիւքիւմէթի տախի Գօրֆուատաք ճիհէթլէրինտէ թիւրք լէրին եօլուսու քէսմէք իւզրէ հարպ վաթօրլարը կէստէրէճէք տիլ :

Մ Ա Ր Ո Ք

Ալմանիա իմբէրաթօրը Վիլհէլմին շու սօն սէյահաթընտա թանճէրէ եանի Մարօք մէմալիքինին իսթէլէսինէ ուլլարմասը էլըրօբա ճէրիտէլէրինի խալլը իշլալ իթմիշ տիլ : Իմբէրաթօրըն պու զիլարէթինէ ալման կազէթալարը բօլիթիգաճա պիտի մագսէտ համլ իթմէյուպ, եալընը Մարոքտա Ալմանլարըն մէնֆաաթ վէ թիճարէթինի մուհաֆազա իթմէք վէ թանճէրի հէր միլլէթ իշիւն սէրպէսթ իսթէլէ (Բօրթօ—Ֆրանկօ) կէօրմէք արղուսընտա պուլընտըղըն պէյան իտէյորլար. կէչէն սէնէ ինկիլթէրա վէ Ֆրանսա պէյինտէ պիտի թագըմ մէսէլէլէրլէ պէրապէր Մարոք իշիւն տախի իթթիֆագ հուսուլա կէլմիշ օլմասը Ալմանլարըն օլ նօգթատա թահաթընը սէլպ իթմիշ վէ Բէյլըլթագտա մէպուսարտան վարիտ օլան իսթիճպապա վիւքէլա բէյիլի Մ. տը Պիւլմը ճէվապէն, «Մարոքտա Ալմանլարըն թիճարէթտէն մաստա հիշ պիտի մագսէտի օլմատըղը կիպի, պիլ օրալարտա թիճարէթ ու մէնֆաաթըմըղըն մուհաֆազալընա մուգթէտիլիլ, տէտի :

Մ Ո Ի Հ Ա Ր Է Պ Է

Բուս սէրասքէրի ժէնէրալ Լինէվիլի պու կիւն թահթը գօմանտալընտա 300,000 աքէրի վէ 2,500 թօրու պուլընտըղը Բէլթըսպուրկա բարթթ իթմիշ :

— Վլատիլօստօքը գարտան պիլ մուհասէրէ իշլալ իթմէք մէմուրիլէթի ժէնէրալ Նօկիլէ Իհալէ օլընմը տըր :

— Խարպիլտէն էհալի չէքիլուպ կիթմէքտէ օլուպ, բուս սէրասքէրի ժէնէրալ Լինէվիլի մէզքիւր չէհրին մուհաֆազալընա քէմալը կիլմի իլէ չալըլմագ իշիւն գաւարը գաթի վէրմիշ տիլ : Պուհուսլէ պէրապէր ճարօնլար հէր հալտէ Խարպիլի ֆէթհ իտէճէքլէրինէ շիւքհէլէրի օլմատըղընտան, բուս օրտուսընը խարպիլի ճիլարընտան կէրի չէքիլմէսինի մէնն իթմէք մագսէտի իլէ կէրիտէն Բուսլարըն եօլուսը քէսմէք իշիւն մարէչալ Օհամա թէպպիլտէ գուսուր իթմէմէքտէ տիլ : Եագըն կիւնտէ թէքրար գանլը պիլ մուհաֆազա պէքլէնիլիյոր :

ՍՕՆ ԹԵԼԵԳՐԱՖԻԱՐ

ԲԵԼՔԻՍՊՈԼԻԿ, 25 Մարտ

Նօյօկ Վրէնիանըն պէյանը իւզրէ, մուհարէպէնին տէվալընա տալիս աշվալը հաղըրէի թէտգըգ իթմէք վէ անա կէօրէ գաւար վէրմէք մագսէտի իլէ պիլ գօմիսիօնը մախսուս թէչէքիլ իթմիշ տիլ :

Մէզքիւր կազէթա աշվալը հաղըրէտէն ինթաճ իտէրէք, Բուսիանըն մուհարէպէյէ Նիհայէթ վէրուպ սուլհ ահտանմէսինի իմզալմալա մէճպուր օլմատըղըն պէյան իթմէքլէ պէրապէր, աղըր շարթլարլէ միւսալէհա իմզալմագ առալ միւնասըպ օլմատըղը իլալէ իտէյոր :

ՆԱԲՈԼԻ, 25 Մարտ

Իթալիա գրալը վիւքէլալը իլէ պէրապէր պու կիւն պուրալա եէթիլուպ, իմբէրաթօր Վիլհէլմի Հօկկօյլէրն վաթօրընտա գարշըլա տըլար : Իքի հիւքիւմէթարըն քէք սէմիլի սուրէթտէ կէօրիլէ մէլէրի ճալէպի տըգգտաթ ըտը, թաամտան սօնրա հիւքիւմէթար թէպթթապու պուլընտըլար :

ԲԱՐԻՉ, 25 Մարտ

Գրալ Էտուսարտ տիւն Լօնտրատան հարէքէթ իտուպ Գալէ եէթիլտի : Օրատա գալթալթը տան սօնրա թրիլէնի մախուսլէ գրալ հարէքէթ իտուպ, սաաթ 5 պուչուգտա պիլթէթիլթէ եէթիլտի Մ. Լուպէ 10 տագիլա տահա էվլէլ օրայա եէթիլտիշ օլարագ Գրալը գարշըլատը վէ Բարիսէ գատար պէրապէր կէլտիլէր Շանլ էլիլէ սէրայը հաղըրլանմը օլմաղլէ Գրալ օրատա միւսաթիլ իտիլտի վէ էրթէսի սապահ Մարսիլիայա միլթէվէտիհէն թըրէնլէ հարէքէթ իթմիլ :

ՄԱՐՍԻԼԻԱ, 25 մարտ

Ինկիլիլ գրալիցասը «Վիքթօրիա» վէ «Ալպէրթ» նամ վաթօրլէ իլիմանա կիլմիշ օլմաղլէ պուրանըն ինկիլիլ գօնտըլսը կիտուպ պէյանը ուպուտիլլէթ իթմի, վէ թաամտան սօնրա գրալիցա գարայա չըգուպ օթօպպիլլէ չէհրտէ կէլիլտիլէր :

Ա Ձ Դ

Տ. Տօք. Թարսուսն վիլլիպանապէս քաղաքս հաստատուած լինելով, կընդունի ամէն տեսակ հիւանդանի կէսօրէն վիլլ ժամը 2 էն մինչև 4 :

Տունապօքս փողոց թիւ 3

Одговорникъ А. Курбетянъ